ԿԱՐԾԻՔ

Նարեկ Արմենի Սուքիասյանի «Կառուցվածքային և կոնստրուկտիվիստական չափումների էվոլյուցիան ՀՀ արտաքին քաղաքականության մեջ (Հայ-ռուսական հարաբերությունների օրինակով, 2008-2020թթ.)» ԻԳ-00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Խորհրդային Միության կազմալուծման գործընթացն ուղեկցվեց նախկին միութենական տարածքում նորանկախ պետությունների հռչակմամբ, որոնք սկսեցին ընթանալ նոր հասարակական-քաղաքական իրողություններին համապատասխան սեփական ինքնիշխան պետականությունների կայացման բարդ ու դժվարին ճանապարհով: Հայաստանի Հանրապետությունը նույնպես, հռչակելով իր անկախությունը՝ ընտրեց իքնիշխան պետությանը բնորոշ ինքնուրույն արտաքին ու ներքին քաղաքականության կառուցակարգման ուղին: Բնականաբար, պատմական, քաղաքական, տնտեսական և այլ գործոներով պայմանավորված ՀՀ արտաքին քաղաքականության համար առանցքայիններից մեկը հռչակվեց հենց ռուսական ուղղությունը: Անցած ավելի քան 30 տարիների ընթացքում հայ-ռուսական հարաբերութուններում ձևավորվել են որոշակի կայուն ավանդույթներ, ձևավորվել է հարուստ իրավա-պայմանագրային բազա, Հայաստանն ու Ռուսաստանը ակտիվորեն համագործակցում են տարբեր միջազգային հարթակներում և ինտեգրացիոն պրոյեկտներում: Չնայած այդ ամենին, պետք է փաստել, որ հատկապես վերջին տարիներին, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված՝ հայ-ռուսական հարաբերություններում առկա են նաև բազմաթիվ խնդիրներ, որոնք, իրենց հերթին, պահանջում են այդ ուղղությամբ իրականացնել ավելի մեծ ծավալի ինչպես գիտա-տեսական հետազոտություններ, այնպես էլ ներդնել կոնկրետ քաղաքական-գործնական ջանքեր հայ-ռուսական հարաբերությունները զարգացման որակապես նոր մակարդակի հասցնելու համար: Այդ առումով հեղինակի ներկայացրած գիտական հետազոտության թեման, որը նվիրված է ՀՀ արտաքին քաղաքականության մեջ կառուցվածքային և կոնստրուկտիվիստական չափումների էվոլյուցիային հայ-ռուսական հարաբերությունների դիտարկման համատեքստում, անշուշտ արդիական կարելի է համարել: Բանն այն է, որ միջազգային հարաբերութունների այս երկու հիմնական տեսական հայեցակարգերը պետությունների արտաքին քաղաքական վարքագծի ուսումնասիրման և վերլուծության գործում կարևոր դերակատարում ունեն, իսկ փոքր պետությունների՝ հատկապես Հայաստանի հանրապետության արտաքին քաղաքականության մշակումն ու իրականացումը վաղուց լուրջ կոնցեպտուալիզացիայի կարիք ունի:

Սույն ատենախոսության շրջանակներում հեղինակը գիտական ուսումնասիրության է ենթարկում կառուցվածքային ռեալիզմի և կոնստրուկտիվիզմի տեսա-հայեցակարգային դրույթները, դրանց համադրելիության հնարավորություններն ու կիրառման առանձնահատկությունները: Այնուհետև առանձին գլուխներով ուսումնասիրության են ենթարկվում ՀՀ արտաքին քաղաքականության կառուցվածքային և կոնստրուկտիվիստական չափումները 2008-2020թթ. քաղաքական զարգացումների համատեքստում: Կարծում ենք, որ հեղինակը գիտական տեսանկյունից բավականին հետաքրքրական մոտեցում է ցուցաբերել ՀՀ արտաքին քաղաքականության կառուցվածքային չափման էվոլյուցիան դիտարկելով երեք հարթություններում, որոնք ընդգրկում են ներքին-կառուցվածքային, տարածաշրջանային-ենթահամակարգային և գլոբալ-համակարգային գործոնները: Այդ գործոններից յուրաքանչյուրը կոնկրետ Case-երի ուսումնասիրման տեսանկյունից արժեքավոր տեսա-մեթոդական գործիքակազմ է ապահովում:

Միաժամանակ հարկ ենք համարում ընդգծել, որ ատենախոսությունը զերծ չէ նաև որոշ թերություններից ու բացթողումներից, որոնցից, մասնավորապես, կառանձնացնեինք հետևյալները.

1. Առաջին դիտարկումը վերաբերվում է ատենախոսության մասնագիտական դասիչին: Այն ներկայացվում է պաշտպանության ԻԳ.00.02.-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ, մինչդեռ, մեր կարծիքով, աշխատանքի ընդհանուր բովանդակությունն ավելի հարիր էր կամ ԻԳ.00.01. «Քաղաքական գիտության տեսություն», կամ էլ ԻԳ.00.04. «Միջազգային հարաբերություններ» մասնագիտացմանը: Ինչու՞ ենք այդ կարծիքին, քանի որ ԻԳ .00.01 մասնագիտության օգտին է խոսում այն փաստը, որ ատենախոսության բովանդակային առանցքը հենց միջազգային հարաբերությունների տեսության երկու հիմնական հայեցակարգերի՝ նոեռեալիզմի և կոնստրուկտիվիզմի տեսա-մեթոդական վերլուծությունն է, իսկ վերնագրում առկա «հայ-ռուսական հարաբերությունների օրինակով, 2008-2020թթ» ձևակերպումը թեման տանում է դեպի միջազգային հարաբերությունների խնդրային դաշտ, որն էլ արդեն ԻԳ.00.04 մասնագիտության տիրույթում է: Քանի որ 056 մասնագիտական խորհուրդն իրավունք ունի կազմակերպել պաշտպանություններ երեք մասնագիտություններով էլ, կարծում ենք լրացուցիչ հիմնավորման կարիք ունի հենց ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ պաշտպանության կազմակերպման գիտական նպատակահարմարությունը: Իհարկե չենք բացառում, որ առանձին թեմաներ կարող են գտնվել միջգիտակարգային և միջմասնագիտական հատման տիրույթներում, բայց նույնիսկ այդ պարագայում ավելի տրամաբանական կդիտվեր երկու մասնագիտական դասիչներով համատեղ պաշտպանության կազմակերպումը:

2. Բովանդակային տեսանկյունից ատենախոսությունը կշահեր, եթե հեղինակը քննության առներ նաև ՀՀ անկախացումից ի վեր, հատկապես Արցախյան առաջին պատերազմի համատեքստում հայ-ռուսական հարաբերությունների զարգացման էվոլյուցիան նեոռեալիստական և կոնստրուկտիվիստական պարադիգմաների լույսի ներքո: Այլապես դիտարկելով երկու հարացույցները միայն 2008թ. ռուս-վրացական, այնուհետ 2016թ. Ապրիլյան ու 2020թ. 44-օրյա պատերազմների համատեքստում՝ առաջանում է բովանդակային խզվածք ՀՀ արտաքին քաղաքականության ռուսական ուղղության ողջ էվոլյուցիան հասկանալու հարցում:
3. Քանի որ կոնստրուկտիվիզմի մեթոդաբանական զինանոցը հենվում է նաև միջազգային հարաբերություններում նորմերի դերակատարման գնահատման վրա, ցանկալի կլիներ, որ հեղինակը հետազոտության շրջանակներում ուսումնասիրության ենթարկեր նաև հայ-ռուսական հարաբերությունների նորմատիվային բազան, ինչպես նաև ցույց տար, թե քաղաքական ընտրանիներն իրենց հրապարակային խոսույթում ինչպե՞ս են մեկնաբանում կամ ընկալում իրավա-պայմանագրային այս կամ այն նորմի կիրառման հնարավորությունները, և ի՞նչ ազդեցություն են այդ մեկնաբանությունները թողնում հայ-ռուսական հարաբերությունների դինամիկայի վրա ընդհանրապես:
4. Ցանկալի կլիներ, որ ատենախոսության շրջանակներում ավելի մանրամասն վերլուծության ենթարկվեր 44-օրյա պատերազմի ժամանակագրությունն ու այդ համատեքստում հայ-ռուսական բարձր մակարդակում տարվող ողջ քաղաքական խոսույթը, որը թույլ կտար պարզել և նոեռեալիստական, և կոնստրուկտիվիստական չափումների համատեքստում, թե դրանք ի՞նչ ազդեցություն են ունեցել պատերազմի ընթացքի ու ելքի վրա:
5. Ատենախոսությունում առկա են նաև տեխնիկական բնույթի թերություններ: Մասնավորապես 14-րդ էջում առկա է անավարտ միտք, դատարկ էջ (108-109):
6. Աչքի է զարնում նաև օգտագործված գրականության չափից դուրս մեծ ծավալը, որը զբաղեցնում է ատենախոսության գրեթե 30%-ը՝ մոտ 50 էջ: Կարծում ենք, հեղինակն այդ հարցում դրսևորել է անհարկի պեդանտություն և կարող էր ազատորեն այդքան հղումներ չանել, մանավանդ, որ այդ գրականության մեծ մասն իրենից գիտական արժեք քիչ է ներկայացնում:

Այնուհանդերձ, պետք է նշել, որ հեղինակը կատարել է բավարար գիտական աշխատանք թեմայի շրջանակներում: Ատենախոսության շրջանակներում առաջ քաշված խնդիրներն ու դրանց հասնելու ուղիները գիտականորեն փաստարկված են և գտնվում են տրամաբանական որոշակի կապի մեջ: Եզրակացությունները բխում են կատարված հետազոտական աշխատանքի բովանդակությունից:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք, որ Նարեկ Արմենի Սուքիասյանը «Կառուցվածքային և կոնստրուկտիվիստական չափումների էվոլյուցիան ՀՀ արտաքին քաղաքականության մեջ (Հայ-ռուսական հարաբերությունների օրինակով, 2008-2020թթ.)» թեմայով ատենախոսության համար արժանի է ԻԳ-00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ հայցվող քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին, ինչի համար համապատասխան միջնորդությամբ դիմում եմ մասնագիտական խորհրդին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝ ԽԱՉԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ
քաղաքական գիտությունների դոկտոր,
ԵՊՀ Քաղաքական գիտության պատմության
և տեսության ամբիոնի պրոֆեսոր

Քաղ. գիտ. Դոկտոր, պրոֆեսոր Խ. Գալստյանի ստորագրությունը
հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար,
Պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ք. Երևան
28.02.2022թ.